

ԶՈՒԱՐՃԱԼԻՓ

Ազգասրահայրիկ Նարայեանի սրտիկ

(Կրօնիկ . Ուղտիստ խոսքիկ հոսման .)

ՇՅՅՐՈՒ հետաքրքրական և օգտակար տեղեկութիւն մը կրնայ սեպուիլ՝ այժմեան Եւրոպական արքունեաց իրարու հետ ունեցած ազգակցութեան յարաբերութիւնները գիտնալը . մանաւանդ անոնց՝ որ պատմութիւններ և օրագրիներ կարգալու ակորժող ու փութաջան են , որով պայծառ կրնան ըմբռնել օրագրաց մէջի կազմ թագաւորաց և իշխանազանց վրայ գրուած լուրերը . մինք ալ շատերուն աս փափաքը լեզունելու համար անցեալ տարուան զուարճալիք ըսուած մասին տեսք՝ աս տարի կարգով կը դնենք Եւրոպայի գլխաւոր թագաւորութեանց յեղափոխութիւնը : Նարայեանեան տոհմէն սկսել նուս պատճառն աս է , որովհետեւ քիչ ատեն է որ կայսր պսակուելով մեծին Նարայեանի եղբորը որդին , ամէն լրագրաց գլխաւոր նիւթն եղաւ , անոր համար ամէնուն ուշագրութիւնն ալ աս տոհմին վրայ է , այնչափ աւելի որ աս ազգատոհմն թագաւորական յեղ չէր ասկէ քիչ տարի առաջ : Ուրեմն տեսնենք մեծին Նարայեանի ծագումը և իրեն բազմատարած ազգատոհմը :

Կարոլոս Մարիամ Պոնաբարթէ ծնաւ 1746ին մարտի 29ին . պատգամաւոր եղաւ քորսիկացոց կողմանէ Գաղղոյ թագաւորին քովը . կարգուեցաւ Լեթիցիա 1 րամոնիոյին հետ , ու 1785ին մեաւ Մոնփելիէ :

Կարոլոսի սին ռէրիտէ :

Ա . Յոսեփ Նաբ . Պոնաբ . Քորթէ ծնաւ 1767ին Յունկարի 7ին . 1806էն ինչուան 1808 Նարայեան թագաւոր եղաւ . 1808 Յունիսի 6էն ինչուան 1813 թագաւոր Սպանիոյ , Օգոստոսի 1ին յամին 1794 Մարիամ Յուլիայ Քլարիին հետ պսակուեցաւ որ Հուստի թագուհւոյն , Յով

1 Լեթիցիային համամայր եղբայր խել մը աննէն վերջը ճանչուեցաւ կարգինալ Ֆէշ անուամբ մէկը , այբիպիսկոպոս 1էնի որն որ 1839ին Հռովմ մեաւ :

հաննէս Կարոլոս Պեռնատթին կնկանը քոյրն էր : Մեաւ 1845ին Ապր . 7ին :

Բ . Նարայեան Պոնաբարթէ Այաչիոյ ծնաւ 1769ին Օգոստ . 15ին . 1804ին Մարտի 18ին կայսր եղաւ Գաղղ . նոյն տարւոյն Դեկտ . 2ին կայսր օծուեցաւ . 1805ին Մարտի 26ին ալ թագաւոր իտալիոյ , պաշտպան Հռենոսեան գաշնակցութեան , միջնորդ Հելուեփական գաշնակցութեան : Նարայեան կարգուեցաւ առաջին անգամ Մարտի 8ին 1796ին Մարիամ Վարգուհի Յովսէփինային հետ՝ որն որ 1763 Յունիսի 24ին ծնած էր Մարթինիկա կղզին , և այրի մնացած էր Ալէքսանդր Պոնաբարթէն : Յովսէփինա արձկուեցաւ Նարայեանէն 1810ին ու մեաւ Մալմէզոն 1814ին Մայիսի 29ին : Նարայեան պըսակուեցաւ երկրորդ անգամ 1810ին Ապր . 2ին Մարիա Լուիզիա Թերէզային Աւստրիոյ արքեպսուհւոյն հետ որ 1791ին Դեկտ . 12ին ծնած էր . ասիկայ Փարիզու 1814ին գաշնակցութեամբը եղաւ դքսուհի Փարմայի , Փիալենցայի ու Կուասգալլայի , մեաւ 1847ին Դեկտ . մէջ : Իսկ Նաբ . 1821ին Մայիսի 5ին մեաւ Ս . Հեղինէ կղզին իբրև կալանաւոր :

Գ . Լուչիանոյ Պոնաբարթէ Այաչիոյ ծնաւ 1775ին իշխան Քանինոյի 1814ին Օգոստ . 18 : Ամուսնացաւ առաջին անգամ 1795ին Քրիսթինա Պոյէրին հետ , որն որ մեաւ 1801ին . յաջորդ տարին նորէն կարգուեցաւ Ալէքսանդրա Պէլլանին հետ որ 1778ին Քալէ ծնած էր . Լուչիանոն մեաւ վիթերպոյ 1840 Յունիսի 13ին :

Դ . Մարիամ Աննա Էլիզա Պոնաբ . նոյնպէս Այաչիոյ Յունկ . 3 . 1777ին ծնաւ . Լուքսայի և Փիոմպիւնոյի իշխանուհի և դքսուհի Թոմբանայի . կարգուեցաւ 1797 Մարտի 5ին Փելլքս Պաչիոքքի իշխանին հետ , ու ինքը մեաւ 1820 Օգոստ . մէջ : Ասիկայ երկու որդի ձգեց . Առաջինը Նաբ . Էլիզա Պաչիոքքի 1804ին ծնաւ , ու կոմս Քալմարթային հետ կարգուեցաւ : Երկրորդը Փեդերիկոս Պաչիոքքի Հռովմ մեաւ :

Ե . Լուքովիկոս Պոնաբարթէ Այաչիոյ ծնաւ Սեպտ . 2 , 1778ին . 1805էն ինչուան 1810 Յուլ . 1 թագաւոր Հոլանտիոյ . ամուսնացաւ Յունկ . 3ին , 1802 Օրթէնիսիա Պոնաբարթէ իշխանուհւոյն հետ , որն որ Նարայեանի Յովսէփինա առաջին

ամուսնոյն մեծ գուսարն էր 1793ին ծնած ու քոյր Եւգինէոս Պոհարնէ իշխանին 1 . մեռաւ 1837 Հոկտ . 3ին . իսկ Լուգովիկոս Պոնաբարթէ 1846 Յուլիսի 23ին :

2 . Մարիամ Պաւլինէ որ Մեծն Նաբոլէոն զինքը կուսադաւալայի դքսուհի անուանեց . ասիկայ նախ կարգուեցաւ Լըբլէր զօրավարին հետ , ու երկրորդ անգամ 1803ին կամիլոս Պորկէզէ իշխանազնին հետ . ասիկայ անորդի մեռաւ :

Է . Մարիամ Քարոլինա 1780ին Այաչչիոյ ծնաւ . ասիկայ Յովակիմ Մուրատ Նէպոլոսոյ թագաւորին հետ պսակուեցաւ 1800ին . ու մեռաւ Փլորենտինա 1839ին չորս որդի թողով . որոնցմէ առաջինը որ Նէպոլոսոյ թագին ժառանգ կոչուած էր Նաբոլէոն Աքիւլէս անուամբ մեռաւ 1847ին 46 տարեկան : Մնացած իրեքն ալ թագաւորազանց հետ կարգուած չըլլալուն զանց կ'առնուէր հոս մէկիկ մէկիկ յիշատակելը :

Ը . Հերոնիմոս Պոնաբարթէ 1784ին Այաչչիոյ ծնաւ ու 1807էն ինչուան 1813 թագաւոր վէսաֆալտոյ կարգուեցաւ 1800ին Փրեգեբրիկոս կատարինէ վիւրթեմպերկի արքայադատեր հետ . Նաբոլէոնի եղբարց մէջէն աս միայն կենդանի է ու հիմա Գաղղիոյ առաջին Մարաշասոն է :

1 . Եւգինէոս Պոհարնէ եղբայր Օրթէնսիա թագուհւոյն , ամուսնացաւ Աւգոստիա Ամալիա Պաւերիայի թագաւորին դստեր հետ : Ասիկայ վեց որդի ունեցաւ . որոնց մէջ առջինեկը կը կոչուէր Մաքսիմիլիանոս , Նաբոլէոն Պոհարնէ դուքս Լլեթէնպերկի . որն որ 1846 Յուլ . 14ին ամուսնացաւ Ռուսաց կայսերազնիանը Մարիամ Միքոլայէվնային հետ . մեռաւ անցեալ տարուան Հոկտ . վերջերս : Բը . Յովսէփինա Պոհարնէ որն որ պսակուեցաւ 1823ին Յովսէփ Օլքար Ա . Շուէտի թագաւորին հետ : Գը . Եւգինիա Պոհարնէ որ կարգուեցաւ 1826ին Փրեգեբրիկոս Հոհէնցոլտերն — Հէքինկէնի արդի թագաւորող իշխանին հետ . Գը . Ամալիա Պոհարնէ Պրազիլի տօն Բեարոս կայսեր հետ պըսակուեցաւ 1829ին : Եը . Օգոստոս Պոհարնէ որ Բորդուգալի տօննա Մարիա թագուհւոյն հետ կարգուեցաւ 1833ին բայց նոյն տարին մեռաւ : Զը . Թէոտոլինաս որ 1841ին պսակուեցաւ Գուլիէլմոս վիւրթեմպերկի կոմսին հետ :

Կարլոս Պոնաբարթէի Բառերը :

Յովսէփ Պոնաբարթէն երկու գուսար ունեցաւ , որոնցմէ մէկը ողջ է միւսը մեռած :

Նաբոլէոն որդի մը միայն ունեցաւ Մարիա Թերէզայէն որ իրեն յաջորդ պիտի ըլլար և կը կոչուէր Նաբոլէոն Ֆրանսուա թագաւոր Հռովմայ , դուքս Բաշթափ . ասիկայ մեռաւ Վիեննայ 1832 Յուլիսի 22ին :

Լուչիանոյ Պոնաբարթէն տասնութեկ որդի ունեցաւ , հինգը ուսար և վեցը դուսար . մանչերուն մէջէն մէկը մեռած է Յունաստան , մէկալ չորսը ողջ են , որոնցմէ առաջինը կը կոչուի Կարոլոս Լուչիանոյ Պոնաբարթէ իշխան Քանկինոյի և Մուսինեանոյի 1 . Բը . Լուգովիկոս Լուչիանոյ Պոնաբարթէ . Գը . Պետրոս Նաբոլէոն Պոնաբարթէ , Դը . Անտոն Պոնաբարթէ :

Լուգովիկոս Պոնաբարթէ իրեք որդի ունեցաւ . որոնցմէ առաջինը որ Նաբոլէոն Կարոլոս կը կոչուէր ու միանգամայն Հոլանտայի թագաժառանգն էր , մեռաւ 1807ին . երկրորդը նոյնպէս մեռած է . իսկ երրորդը , որ Կարոլոս Լուգովիկոս Նաբոլէոն Պոնաբարթէ կը կոչուի , ծնաւ Փարիզ 1808 Ապրիլի 20ին . խել մը տարի Համբուրգ բերդը բանտարկուեցաւ խռովութիւն հանելուն համար , ընդդէմ Լուգովիկոս Փիլիպպոս թագաւորին : Բայց վերջը բանտէն փախչելով 1848ին Գաղղիացոց հասարակապետութեան Նախագահ ընտրուեցաւ , ու անցեալ տարի Դեկտեմբերի 2ին ալ կայսր եղաւ ժողովրդեան հաւանութեամբ :

Հերոնիմոս Պոնաբարթէ իրեք որդի ունեցաւ երկուքը մանչ մէկը աղջիկ . առջինեկը որ կը կոչուէր նոյնպէս Հերոնիմոս Նաբոլէոն Պոնաբարթէ մեռաւ 1847ին 33 տարեկան . երրորդը որ կը կոչուի Նաբոլէոն Յովսէփ ծնած է 1822ին ու կը գտուի հիմա Գաղղիա , ինչպէս բոլոր մէկալներն ալ , ու մեծամեծ պաշտօններու մէջ են :

1 . Ասիկայ ինը որդի ունի , որոնք միշտ Հռովմ կը կենան , իսկ Կարոլոս Լուչիանոն Փարիզ :